



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 02 » մարտի

2015թ.

N 13

ք. Ստեփանակերտ

**Դատախազության աշխատակազմի պետական ծառայության պաշտոնների
անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին**

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ կետերով և 28-րդ հոդվածով,
«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածների համաձայն

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել դատախազության աշխատակազմի պետական ծառայության
պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը: (Կցվում է)

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել ԼՂՀ դատախազության
աշխատակազմի ղեկավար Վ.Վ.Ավագիմյանի վրա:

3. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր
դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ
քաղաքապետախազներին և ԼՂՀ դատախազության աշխատակազմի ղեկավարին: 4. Ուժը
կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 21 առ 23.06.2014թ. «Դատախազության
աշխատակազմի պետական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների
քանակը հաստատելու մասին» հրամանը:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան

Հաստատված է
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 գլխավոր դատախազի 2015 թվականի
 մարտի 02 թիվ 13 հրամանով

**Դատախազության աշխատակազմի պետական ծառայության պաշտոնների
 անվանացանկը և հաստիքների քանակը**

| h/h | Պաշտոնների անվանումը (հաստիք) | Պաշտոնների խմբերը և ենթախմբերը | Հաստիքների քանակը |
|-----|-----------------------------------|-----------------------------------|----------------------|
| 1 | 2 | 3 | 4 |

| | | | |
|---|--------------------------------|-------------|----------|
| 1 | Գլխավոր դատախազի խորհրդական | հայեցողական | 1 |
| | Ընդամենը | | 1 |

ԼՂՀ դատախազության աշխատակազմ

| | | | |
|---|--|------------------|----------|
| 2 | ԼՂՀ դատախազության աշխատակազմի ղեկավար | բարձրագույն 1-ին | 1 |
| | Ընդամենը | | 1 |

Ֆինանսատնտեսական բաժին

| | | | |
|---|------------------------------------|---------------|----------|
| 3 | բաժնի պետ | գլխավոր 2-րդ | 1 |
| 4 | բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ | առաջատար 1-ին | 1 |
| 5 | բաժնի գլխավոր մասնագետ | առաջատար 1-ին | 1 |
| | Ընդամենը | | 3 |

Հատուկ, ընդհանուր բաժին և արխիվ

| | | | |
|---|---------------------------|---------------|---|
| 6 | բաժնի պետ | գլխավոր 2-րդ | 1 |
| 7 | բաժնի գլխավոր մասնագետ | առաջատար 1-ին | 2 |

| | | | |
|-----------------|---------------------------|---------------|-----------|
| 8 | բաժնի առաջատար մասնագետ | առաջատար 2-րդ | 2 |
| 9 | բաժնի 1-ին կարգի մասնագետ | կրտսեր 1-ին | 9 |
| Ընդամենը | | | 14 |

Հանրային կապերի բաժին

| | | | |
|-----------------|-------------------------|---------------|----------|
| 10 | բաժնի պետ | գլխավոր 2-րդ | 1 |
| 11 | բաժնի գլխավոր մասնագետ | գլխավոր 3-րդ | 1 |
| 12 | բաժնի առաջատար մասնագետ | առաջատար 2-րդ | 1 |
| Ընդամենը | | | 3 |

Տեխնիկական սպասարկման անձնակազմ

| | | | |
|-----------------|------------|--|-------------|
| 13 | վարորդ | | 15 |
| 14 | պահեստապետ | | 1 |
| 15 | հավաքարար | | 8,5 |
| 16 | էլեկտրիկ | | 1 |
| 17 | պահակ | | 7 |
| 18 | ցրիչ | | 1 |
| Ընդամենը | | | 33,5 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 55,5 |